
ՀԵՐՈՍՆԵՐԻ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՒՈՎԻ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ

ԱԼԻՌԵՋԱ ԲՈՆՅԱԴԻ

Ոմանք այն կարծիքին են, թե Չեխովի պիեսներն ու այլ ժանրի երկերը լի են տրտմությամբ, թախիծով, ընկճվածությամբ ու հուսախաբությամբ: Թեպետ կարող է այդպես թվալ, կամ նույնիսկ ինքը՝ Չեխովն էլ իր երկերում նման խնդիրներ արծարծած լինի, սակայն երբ ենթատեքստի դիտանկյունից խորանանք նրա ստեղծագործությունների մեջ և ծանոթանանք գրողի դարաշրջանին, նրա անձնական ու հասարակական կյանքին, նրա խոսքում, անկասկած, ոչ միայն նման դժբախտություններ ու մտահոգություններ հաստատող խնդիրներ չենք նկատի, այլև կատարելապես կընկալենք նրա կարեկցանքը՝ իր դասակարգին պատկանող մարդկանց, ինչպես նաև ռամիկների, ցածր խավի և ընդհանրապես հասարակության նկատմամբ: Ուստի պետք է լուրջ ընդունել մարդկանց միջև եղած անհամաձայնության մասին նրա նախազգուշացումները և քայլ անել այդ ամենը հասկանալու համար:

Վլադիմիր Բորիսովիչ Կատայովը Չեխովի պատմվածքներում կերպարներին ծաղրելու ձևի մասին ասում է. «Արդյոք գրողը (Չեխովը) կարող էր գրվածքը այնպես ներկայացնել, որ ընթերցողին մղեր կարեկցելու «Չինովնիկի մահը» պատմվածքի հերոս Չերվյակովին: Հավանաբար այո՛, այն դեպքում, երբ գրեր՝ «Ինչքա՛ն դժբախտ է այս չինովնիկը և ինչքա՛ն քիչ են իր կյանքի ուրախությունները: Ինչպես է իր շեֆը շարունակ հրամայում նրան, և մի գեներալ էլ ինչ խստասրտությամբ ու կոպտությամբ է վարվում նրա հետ»¹: Այդ դեպքում պատմվածքը կդառնար զգացմունքային պատմություն՝ մի փոքր մարդու մասին, որին կշտամբում են հզորները: Չեխովից առաջ ռուսական գրականության մեջ քիչ չեն նման երկերը, որոնք գրվել են ընթերցողների կարեկցանքը շահելու համար: Չեխովը, սակայն, հաջողությամբ հաղթահարում է այդ ավանդույթը և այն ներկայացնում նոր ձևով: Ո՞վ է այս պատմվածքում խստորեն ծաղրի ենթարկվում. գեներալը, իհարկե ո՛չ. նա ամբողջովին բնական է նկարագրվել: Նա ընդամենը հակազդում է պատմվածքի մեկ այլ կերպարի պահվածքին: Ճիշտ է, պատմվածքի վերջում նա ոտքը գետնին խփելով գոռում է՝ «կորի՛ր», սակայն, վերջին հաշվով, դա որևէ մեկի բնական արձագանքն է, երբ իրեն հունից հանում են:

¹ **Ջանուլլահ Քյարիմի-Սոթահհար**, Ուսումնասիրություն ռուս գրականության մեջ կիրառված կերպավորման և սյուժեների նկարագրման ձևի մասին, «Օտար լեզուներով ուսումնասիրություններ» պարբերական, № 12, 2002, էջ 153 (պարսկերեն):

Այստեղ ծաղրի առարկան հենց այն «ցածրաստիճան չինովնիկն» է, որի համար ռուս նախկին գրականությունը շատ-շատ արցունքներ է թափել: Ցածրաստիճան չինովնիկը այս պատմվածքում թե՛ ծիծաղելի է և թե՛ ցավալի: Նրա անհիմաստ պնդումները ծիծաղելի են, իսկ իր մարդկային արժանիքներից հրաժարվելն ու ստորանալը՝ տխրալի: Թվում է, թե Չեխովն իր կերպարներն այնպես է ընտրում, որ ընթերցողի համար նոր և զարմանալի լինեն, որը տարբեր է անցյալ ժամանակի որոշ ստեղծագործություններից, որոնք պատմական ու մշակութային նախադրյալներ ունեն, ինչպես Շեքսպիրի պատմական պիեսները: Չեխովը կյանքի դժբախտությունները ցույց տալու համար չի օգտվում դասական հեղինակների փորձից, այլ նրբորեն ու վարպետությամբ քննության է ենթարկում հասարակ մարդկանց կերպարները և այս գործում օգտվում է երգիծանքի ազդեցիկ հնարանից, բայց ոչ այն էժանագին երգիծական ժանրից, որը տարածված էր իր ժամանակի գրականության մեջ: Չեխովի կերպարները ծիծաղելի են, բայց և միաժամանակ խղճալի: Գրողի կերպավորման առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա չի կենտրոնանում որևէ առանձին կերպարի վրա, որը կլիներ կողմնակալ մոտեցում: Նրա գործերում գլխավոր և երկրորդական կերպարները քննական առումով մակարդակային տարբերություններ չունեն:

Կերպարների առանձնահատկությունները նրա ստեղծած միջավայրի ու պատկերման միջոցների հետ մեկ ուղղության վրա դնելը, գործողության ժամանակի դանդաղ ընթացքը, կերպարների շարժունակ չլինելը և ժամանակի անորոշությունը, որոնք նկատելի են Չեխովի ստեղծագործություններում, հենց այդ եղանակի արդյունք են: Չեխովի կերպարների առանձնահատկություններից է նաև նրանց միջև երկխոսության բացակայությունը:

Իրանցի բանասեր դոկտ. Սադեղին ասում է. «Այս երկխոսության բացակայությունն է, որ պետք է լռության պահպանման միջոցով դանդաղեցնի ներկայացման ռիթմը, բացահայտի ենթատեքստերը կամ չասված խոսքերը: Այն չասվածը հոգեկան ու երազային մի շարժունակ աշխարհ է: Մեծ ներկայացումներում կարգն այնպես է, որ տարածության ու ժամանակի գործողությունների յուրաքանչյուր պահը կամ իրը վերաճում են «որոշակի իմաստի»²»: Թերևս սրանից է, որ Չեխովի կերպարները, առիթներն ու առարկաները հավասար չափով հագեցած են սենսանտիզմով՝ իմաստայնությամբ: «Չեխովը քարոզող, եզրակացություն անող և կշտամբող չէ: Նա մի գրող է, որը հասկացել է ադամորդիների դժբախտությունները, կամ ավելի կոնկրետ ասած՝ ադամորդի լինելու դժբախտությունը. այն ադամորդունարդ արարածի, որը մտածելու և խոսելու շնորհիվ ծառից ավելի վեր է, սակայն քարից ավելի դժբախտ»³:

² **Ղոթբեդդին Սադեղի**, Երգիծանքը Չեխովի երկերում, «Արվեստ», № 63, 2005, էջ 47 (պարսկերեն):

³ **Ջավադ Մոջաբի**, Երգիծանքի ուղորտը, «Գրական հաջողներ» ամսագիր, հոկտ. 1974, էջ 8 (պարսկերեն):

Կերպարները, որոնց Չեխովը ներկայացնում է իր պատմվածքներում ու պիեսներում, անհոգ և անպատասխանատու մարդկանց մի բազմություն է, ովքեր միմյանց նկատմամբ փոխըմբռնման կարիք չունեն, մի բան, որ տեսնում ենք «Աբսուրդի թատրոնի» հետևորդ գրողների ստեղծագործություններում, ինչպես Սամուել Բեքեթի «Գողոյին սպասելիս» պիեսի հերոսները՝ Վլադիմիրն ու Էստրագոնը: Սա հենց որոշ իմաստով Չեխովի ստեղծագործության այն մեթոդներից է, որի պարագայում նա չի կենտրոնացնում իր կերպարներին, և, հետևաբար, նրա երկերում, ինչպես արտուրդի թատրոնի գրողների երկերում, դասական իմաստով «հերոսականացումը» տեղ չունի:

Չեխովի երկերի երկրորդական կերպարները նույնքան կարևոր են, որքան առաջնային կերպարները: Այս գրելաոճն է պատճառ դարձել, որ այդ կերպարները ընթերցողների մտքում ավելի մնայուն լինեն և չձուլվեն մյուս կերպարների մեջ: Այս մեխանիզմը նույնպես պատճառ է դարձել, որ նրա երկերում հավասարակշռություն ստեղծվի ձևի ու բովանդակության միջև, որն իր հերթին հարմար միջոց է՝ երգիծական և դրամատիկական մեթոդների առանձնահատկությունների համադրման առումով:

Չեխովի գրելաոճի կարևոր հանգամանքներից մեկն էլ այն է, որ իր պիեսների ու պատմվածքների բոլոր կերպարները կան նախապես ճանաչում են իրար, կան էլ երկի սկզբում ծանոթանում միմյանց հետ: Նրանցից ոչ մեկը անսպասելիորեն չի հայտնվում ու միանգամից էլ չի անհետանում, և բոլորի ճակատագրերը պարզ ու որոշված են, ուստի հեղինակը կարողանում է իր հոգեբանական մտքերն ու տեսակետները լավագույնս արտահայտել:

Թեպետ Չեխովի պատմվածքներում ու պիեսներում ավանդական ձևով ներկայացված հերոսներ չենք տեսնում, և կերպարների մեծ մասը տառապում է հոգեկան անհավասարակշռությունից, սակայն Չեխովը երբեք իր կերպարներին «վատ» ու «լավ» խմբերի չի բաժանում: Նրա կերպարները դրական ու բացասական հատկությունների բաղադրություն են, որոնք ընթանում են մի պատճառահետևանքային հունով: Կարելի է ասել, որ Չեխովի հերոսները ավելի շատ տգետ են, քան շարլատան: Նրանց մեջ բնածին չարանենգություն գոյություն չունի, այլ փոքրոգությունը, եսասիրությունն ու իրենց բնագրին անձնատուր լինելն է նրանց թշվառության ու կործանման պատճառը:

Չեխովի պատմվածքներից քչերն են, որ երգիծական ժանրին չեն պատկանում, և հենց նրա ստեղծագործության ցայտուն արտահայտությունն էլ այդ է: Նա իր պատմվածքների ու պիեսների բովանդակությունը այնպես է համեմունք երգիծանքով, որ նույնիսկ ամենահասարակ մարդկանց էլ խանդավառում է, ծիծաղեցնում, ուրախացնում, և, իհարկե, նման մարդիկ ավելի ուշադիր են կարդում նրա ստեղծագործությունները, ծանոթանում երգիծանքի տակ թաքնված, բայց դառնություն ու տխրություն արտահայտող երկերում նրա արծարծած մտքերին ու գաղափարներին: Չե-

խովը այն համոզման էր, թե ցանկացած զավեշտալի բան հուզիչ է, և դա լավագույնս արտացոլում է իր երկերում: Նա կիրառում է յուրահատուկ մեթոդ՝ «մարդկանց անհարմար վիճակ մեջ դնել», որով և կոմեդիայի ժանրում «ակնկալիքների տեղափոխումով» ստեղծվում է «չեխովյան երգի-ծանրը»: Հերոսները գտնվում են իրենց համար անսպասելի դիրքերում, և ընթերցողը հանդիպում է այնպիսի կերպարների, որոնց պատկան տեղը երկում ակնկալելի չէ: Միաժամանակ, երբ կողմնակի հայացքով ենք նայում կերպարներին, նրանք կոմիկական են երևում, բայց երբ մեզ պատկերացնենք նրանց փոխարեն, լիովին կզգանք նրանց ցավի ու վշտի խորությունը և ստեղծված ողբերգական մթնոլորտը:

Մեկ ուրիշ օրինաչափություն ևս. եթե շրջանցենք «Բալենու այգին» պիեսի Լոպախինի պես բացառություններին, ապա կերպարները մեծ մասամբ հարուստ ու բարեկեցիկ խավից են, և դա բնական է, քանի որ Չեխովն իր մանկությունից մինչև երիտասարդության շրջանը ճանաչում էր նման մարդկանց և ականատեսն էր նրանց գոռոզությանը, եսասիրությանը և, իհարկե, հիմարությանը լի բնավորությանը: Թվում է, թե այլ պատճառներ էլ են եղել գլխավորապես բարեկեցիկ խավի ընտրության իմաստով: Հարվեյ Պիչերը այս կապակցությամբ գրում է. «Եթե Չեխովի պիեսները մարդկային էության զգացմունքային կողմի արտացոլումը համարենք, կարող ենք երկու պատճառ նշել այդպիսի ընտրության համար: Նախ այն, որ այդ խավի մարդիկ կրթություն ունենալու և որոշ դեպքերում ինքնասիրության պատճառով կարողանում են իրենց զգացմունքները ճշգրտորեն արտահայտել ու հաղորդել հանդիսատեսին: Երկրորդ՝ սա զգացմունքների այն տեսակն է, որ նման մարդկանց մեջ գոյություն ունի: Թերևս Չեխովը զգացմունքների արտահայտության ամենաճշգրիտ և ամենախոր տեսակը գտել է ազնվական խավի մեջ, և դրանք զգացական լավագույն պատկերներով, առանց դրամատիկ գունավորումների ներկայացրել իր պիեսներում»⁴:

Կարելի է ասել, որ Չեխովի կերպարներից շատերը չունեն այն տվյալները, որ կարողանան դիմակայել պատահարներին, և նրանց ներկայությունը պատմվածքներում պարզապես հասարակության մեջ իրենց ունեցած տեղի ու դիրքի պատճառով է, ինչպես ասենք՝ սպաները, սիրահարները, ուսուցիչները, գրողները և այլն: Ուստի այս մեխանիզմի կիրառումով ոչ միայն հարցականի տակ է դրվում նրանց կարևորությունը հասարակության մեջ, այլև ամբողջ դժբախտությունն ու հուսախաբությունը վերագրվում է նրանց, ովքեր պետք է ուսյալների շարքում լինեին: Պրիչիբեկը համանուն պատմվածքում և Տրիգորինը «ճայը» պիեսում այսօրինակ մարդկանցից են: Չեխովի կերպարներից շատերը երևակայությունների մեջ են. նույնիսկ նրանք, ովքեր սիրահարվում են, կա՛մ սիրահարության ձևը չգիտեն, կա՛մ իրենց նպատակներին հասնելու ընթացքում պար-

⁴ **Հարվեյ Պիչեր**, Չեխովի պիեսները, թարգմ. Ախթար Էրթեմադի, «Նամայեշ թատրոն» ամսագիր, 2003, № 65 և 66, էջ 34 և 35 (պարսկերեն):

տություն են կրում և իրենց նպատակին չեն հասնում: Տրեպլովին «ճայը» պիեսում կարելի է նման մարդկանցից մեկը համարել:

Չեխովի պիեսների ու պատմվածքների մեծ մասում բժիշկները կարևոր դեր ունեն, և դա թերևս այն պատճառով է, որ նախ ինքը՝ Չեխովը, բժիշկ էր ուստի, բնականաբար, լավածանոթ էր նրանց հոգեբանությանն ու վարքագծին, իսկ ապա՝ իր ակնկալիքներն է ներկայացրել բժիշկներին՝ իբրև հասարակության ուսյալ խավի: Սակայն հետաքրքրականն այն է, որ իր գրվածքների մեծ մասում, ուր սովորաբար բժիշկը ներկա է, գլխավորում է այն մարդկանց, ովքեր անորոշության ու խճճվածության մեջ են գտնվում՝ բժիշկներ, ովքեր կամ լավ չեն յուրացրել իրենց մասնագիտությունը, կամ առհասարակ մերժում են բժշկությունը: Կատարյալ բժշկի կերպար է Կռիլովը՝ «Թշնամիները» պատմվածքում:

Թեպետ Չեխովի երկերում մի տեսակ հիասթափություն ու տրտմություն է տիրում, սակայն դա չի նշանակում, թե նրա կերպարները կյանքի նպատակ չունեն և նույնիսկ չեն ջանում հասնել դրան: Եթե այդպես լիներ, ապա չէր համապատասխանի չեխովյան ռեալիզմի բնույթին: Ռուս ժամանակակից քննադատներից Կուլիշևն ասում է. «Չեխովի կերպարները մշտապես ճամպրուկները ձեռքին վայրից վայր են տեղափոխվում և շարունակ ճամփորդության մեջ են»⁵:

Չեխովի կերպարներին, ըստ իրենց նպատակների, կարելի է երեք խմբի բաժանել:

1) Կերպարներ, որոնց նպատակները ընդհանրական են և համապատասխանում են հասարակության նպատակներին, ինչպես Տրեպլովը «ճայը» պիեսում:

2) Կերպարներ, որոնց նպատակները անհատական են և չեն համընկնում հասարակության նպատակներին, ինչպես Պրիշիբեևը համանուն պատմվածքում:

3) Կերպարներ, ովքեր հասնում են իրենց նպատակներին, թեպետ այդ նպատակները հեղինակի տեսանկյունից կարող են հասարակ լինել, ինչպես Չիշմա Գիմալայսկին՝ «Հաղարջը» պատմվածքում:

Չեխովն իր ստեղծագործություններում երբեք չափազանցման հնարքը չօգտագործեց և իր ընկերներին էլ խորհուրդ էր տալիս խստիվ հրաժարվել դրանից: Նա իր երկերում հենց այդ համոզմունքով էր մոտենում մարդկանց սովորական վերաբերմունքին, ինչպես դա լինում է առօրյա կյանքում: Այդ պատճառով էլ 1900 թվականին Օլգա Կնիպերին հղած մի նամակում ասում է. «Ես Միրիոլդին գրել եմ և իմ նամակում նրան համոզել, որ ջղային անձնավորություն նկարագրելու դեպքում կոպիտ չլինի: Մարդկանց մեծ մասը նյարդային է, նրանց մեծամասնությունը տառապում է դրանով: Փոքրամասնությունն է, որ զգում է իր հոգու ցավը, բայց ավա՛ղ: Արդյոք փողոցում կամ տանը որևէ մեկին տեսել եք, որ թռչկոտելիս, ինչպես երևակայությունների

⁵ **Ջանուլահ Քյարիմի-Մոթահհար**, Իդեալի խնդիրը Անտոն Չեխովի արձակում ու դրամատուրգիայում և դրանց կապը գրողի հայեցողության հետ, «Լեզու և գրականություն» ամսագիր, 1998, № 5, էջ 61 (պարսկերեն):

մեջ խորասուզված ժամանակ, գլուխն առնի իր երկու ձեռքերի մեջ: Տառապանքը պետք է այնպես արտահայտել, ինչպես դա արտահայտվում է կյանքում, այսինքն՝ ոչ թե ձեռքի ու ոտքի շարժումներով, այլ ծայրի ու նայվածքի միջոցով, ոչ թե ակնարկներով, այլ՝ նրբությամբ: Հոգեկական նուրբ զգացումները հատուկ են մտավորականներին և պետք է հանդարտ ձևով արտահայտվեն: Դուք ասում եք, թե դա պահանջում են բեմական պայմանները: Ոչ մի պայման սուտ ու կեղծիք չի թուլատրում»⁶:

Տոլստոյը Չեխովի պիեսները վատն էր համարում, իսկ պատմվածքների մասին այլ կարծիք ուներ և այդ մասին գրում է. «Չեխովը մեր արձակ գրականության Պուշկինն է. այն չափով, որ ընթերցողը կարողանում է տեսնել այն, ինչ ինքն է զգացել Պուշկինի բանաստեղծություններում: Չեխովը աննման արվեստագետ է»⁷:

Պարսիկ նշանավոր գրող Մոհամմադ Ալի Ջամալզադեն գրում է. «Երբ կարդում ես Չեխովի պատմվածքներն ու պիեսները, այնպիսի ծանոթներ ես գտնում, որ կարծես քո հարազատները լինեն: Չեխովի ստեղծած միջավայրում ծանոթ ու հարազատ եմ գտնում, և երբեմն կերպարներին այնքան կենդանի եմ զգում, որ կարծես թե երկար տարիներ շփվել եմ նրանց հետ ու ճանաչում եմ նրանց ապուպապերին, և նույնիսկ նրանց ամեն մի շարժումը ինձ հնուց ի վեր ծանոթ է ... Կարծում եմ, որ մենք՝ իրանցիներս, և արևելյան բոլոր ժողովուրդները պետք է հաճույք ստանան Չեխով ընթերցելիս, քանի որ անծանոթ չենք նրա ստեղծած միջավայրին և նրա հարթ ու հավասարակշռված խոսքը հազարավոր հարազատ տեսարաններ է բացում մեր աչքերի առջև: Եվ թեպետ նրա կերպարները ռուսական անծանոթ ու տարօրինակ անուններ ունեն, սակայն նրանց խոսքերը շատ հարազատ են հնչում մեր ականջին և նույնիսկ նրանց ծամածռությունները, շարժումներն ու գաղափարները օտար չեն մեզ համար»⁸:

Չեխովը, ի տարբերություն Տոլստոյի և նույնիսկ Դոստոևսկու, իր պատմվածքներում և պիեսներում պատկերում է միջին խավի առօրյա կյանքը: Նրա երկերում առկա սյուժեները, կերպարներն ու միջավայրը ոչ միայն ռուս ժողովրդի, այլև ամբողջ աշխարհի մարդկության համար հասկանալի ու ըմբռնելի են:

Նկատի ունենալով այն թեմաները, որոնք օգտագործվել են Չեխովի կողմից, նա կարծես թե դրանցով վիճաբանության է հրավիրում մյուս գրողներին՝ նոր ձևաչափով ներկայացնելով այդ բոլորը: Չեխովն այն կարծիքին է, թե հասարակության ստորին խավերի, հատկապես հասարակ պաշտոնյաների դժբախտության պատճառը պետք է փնտրել հենց իրենց մեջ, ոչ թե ուրիշ տեղ:

⁶ Չեխովի երկերի ժողովածու, թարգմ. Նահիդ Քաշիչի, 8-րդ հատոր, 1995, Իրան-Թեհրան, էջ 194-195 (պարսկերեն):

⁷ **Ջանուլահ Քյարիմի-Մոթահհար**, Ուսումնասիրություն ռուս գրականության կերպավորման և սյուժեների նկարագրման ոճի և ձևի մասին, «Օտար հետազոտություններ» հանդես, № 12, 1992 թ. գարուն – ամառ, էջ 149 (պարսկերեն):

⁸ **Ջամալզադե Սեյեդ Մոհամմադ Ալի** – Յոթ երկրների պատմվածքներ, Թեհրան, 1961 թ., էջ 166-167 (պարսկերեն):

АЛИРЕЗА БОНЯДИ – *Своеобразие образной системы в сатирических произведениях Чехова.* – Своеобразие сатирических героев Чехова раскрывается по-разному. В частности, они смешны и вместе с тем вызывают жалость. Особенно это заметно в образе героя “Смерти чиновника”. Писателю не свойственна героизация персонажей, что местами роднит его с драмой абсурда, где отсутствие диалогов делает ситуацию неопределённой. Эта неопределённость как раз и способствует тому, что герои попадают в смешное положение.

ALIREZA BONYADI – *Originality of Image System in Chekhov's Satirical Works.* – Disclosure of originality of Chekhov's satire has its own means of performance. Originality is that these characters are laughable, at the same time they arose a feeling of pity. This pattern is most apparent in the image of the hero of “Death of Official”. Chekhov humanly makes no difference between main and secondary heroes. There is no heroization of characters in his works that reminds the originality of absurd drama where absence of dialogs becomes the reason of indefinite situations. Characters don't have deliberate means to resist the occurred situation. This uncertainty serves as a reason that heroes, as a rule, appear in a ridiculous situation.